

Նարինե Ա. Հովհաննիսյան

(Ստեփանակերտ)

Բանասիր. գիյր. թեկնածու

ԹՈՒՐԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱԿՈՒՑ ՕՇԱԿԱՆԻ ՎԵՊԵՐՈՒՄ*

Բանալի բառեր – Հայկական հարց, ցեղասպանություն, գաղափարագրություն, թուրք, ցեղային տիպար, կենսաբանական հոգեբանություն, սադիզմ, զգայարան, ուրացում, հոգեբանական վայրկյան, մտայնություն, բարք, գիտակցության հոսք:

Մուտք

Հակոբ Օշականը բացառիկ երևույթ է հայ բազմադարյան գրականության մեջ, որի ստեղծագործությունն իր գեղարվեստական համակարգի առանձնահատկություններով, բազմաշերտությամբ, մասշտաբայնությամբ հսկայական ներդրում է հայ ոգեղեն արվեստի զարգացման գործում: Օշականի գեղարվեստական համակարգի բարձրագույն նվաճումը՝ վեպը, հոգեվերլուծություն, բարքագրություն և գաղափարագրություն լինելուց առաջ և հետո, մեր խորին համոզմամբ, Հայկական հարցի վեպն է: Հայկական հարցից են սկսվում և դեպի Հայկական հարցն են տանում օշականյան վեպի բոլոր ճանապարհները:

Հայկական հարցը, հայ ժողովրդի ողբերգությունների պատմական ընթացքը հիմնավորապես պայմանավորված էին թրքության հավակնություններով, հետևաբար թուրքը և թրքությունը՝ որպես ազգային հատկանիշների հավաքական ամբողջություն, դառնում են Օշականի վեպի գլխավոր մտասկզբունքները. «Թուրքը ահաուր ազդակ մըն էր ու ճակատագիր մը: Որով՝ վեպի ատաղձ»¹: Թուրքի կերպարը, թրքությունը՝ որպես ցեղասպանության նախահանգամանք, ամբողջությամբ ներկայացված են Օշականի «Հարիւր

* Հղվածն ընդունվել է տպագրության 20.11.2020:

1 Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. Ժ, Անթիլիաս, տպարան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1982, էջ 103-104:

մէկ տարուան», «Մնացորդաց» եռահատոր վիպաշարերում, «Մաթիկ Մելիք-խանեանց», «Սահակ Պարգեւեան» վեպերում, «Կայսերական հաղթերգություն» ժողովածուում, նաև «Ծակ-պտուկը» վեպում, «Խոնարհները» շարքում և այլն: Կարելի է պնդել, որ Օշականի բոլոր ստեղծագործություններում այդ հարցադրումը գործողության մեջ է ներքաշվում բազմամակարդակ դրսևորումներով:

Թուրքը Օշականի վեպում բնութագրված է որպես հայ կյանքի վրա տարածված «աննահանջ քաղցկեղ մը», «հայ հոգիին վրա իրենց սահառո կնիքով»²: Թուրքի ցեղային բնագոյն է ոչնչով չզիջել թրքությունը: Օշականի թուրք տիպարներից ոմանք, օրինակ՝ «Մնացորդաց»-ի հազարապետ Մեմետ փաշան, տառապում են «ամբողջական իրաւ թուրքը»³ լինել չկարողանալու համար, «կը ջանային գղջալ հին թուրքին իրենց մէջ պակասածին վրայ»⁴: Թուրք տիպարի հոգեբանության, գործողությունների զգայարանների, թուրքական բարքերի, մտայնությունների վերլուծությունը Օշականին հանգեցնում է պատմականորեն հաստատագրվող այն եզրակացությանը, որ «Թուրքը Արևելքին աղտն է, կեղտը, թարախը»⁵:

Թուրքի ցեղային նախատիպը՝ իբրև անխախտելի մոլեռանդություն, փոխանցվում է սերնդեսերունդ, և ժամանակների շղթայական փոխկապակցվածությունը փաստագրում է այն տխուր իրողությունը, որ թուրքը երբեք չի փոխվի: «Համապատկեր...»-ի 10-րդ հատորում ցեղային տեսակի ժառանգության դիտանկյունից Օշականը վկայաբերում է իրեն ծանոթ թուրք «կրթեալ» երիտասարդ սպաների հպարտությունը՝ 1915 թ. «կրցածնուն չափ հայ աղջիկ բռնաբարելու եւ զանոնք սպաննելու»⁶ առիթով՝ հավելելով. «Ասիկա ցեղային է ահա»⁷:

Որպեսզի գիտականորեն հնարավորինս ամբողջանա օշականյան թուրքի կերպարը, որպես առանձին ենթահարցադրումներ՝ փորձենք քննել նրա տիպական հոգեբանությունը, գործողությունների զգայարանները և մտայնությունները:

1. Հոգեբանությունը և գործողությունների զգայարանները

Թուրքի հոգեձանաչողությունը գիտական ձգբրտության, խորագննության, համապարփակայնության դիտակետից Օշականի ստեղծագործության մեջ, հիրավի, հասնում է գեղարվեստական բացարձակ մակարդակի. «Թուրք-

2 Նույն տեղում, էջ 38:

3 Նույն տեղում, էջ 138:

4 Նույն տեղում:

5 Օշական 3., Մնացորդաց, հատ. Բ, Անթիլիաս, տպ. Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, 1988, էջ 141:

6 Օշական 3., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. Ժ, էջ 139:

7 Նույն տեղում:

քերը իրենք զիրենք ճանչնալու համար՝ Օշական պիտի՝ որ կարդան»⁸, - նկատում է գրաքննադատ Շ. Տասնապետյանը: Բացառիկ խորաչափություններ են Օշականի՝ թուրքի հոգեդիտարկումներն ու հոգեբնագրական բացահայտումները, ցեղային ներքին, մուսուլմանական ներթափանցումները, սեռային բնագրների հոգեմղումների, ենթագիտակցական հոսքի պեղումներն ու վերծանումները, ներքին պահված իրողությունների հայտնաբերումը:

Թուրքի ցեղային կերպարաստեղծման օշականյան արվեստն առանձնանշվում է գործողություններն արտաքին իրողությունից ներքին իրողություն փոխադրելու տիրական հատկությամբ: Արարքի ու գործողության ներքին զգայարանների որոնումը Օշականի արվեստում գեղագիտական առնչակցություն ունի համաշխարհային գրականության հետ՝ Մարսել Պրուստ, Ջեյմս Ջոյս, Օնորե դը Բալզակ, Ստենդալ, Ֆեոդոր Դոստոևսկի, որոնք, Օշականի գրական ուսուցիչները լինելով, միաժամանակ «իրեն համար գրողներու անուններ չեն, այլ իրենց կրքերու մեծ թիապարտները, իրենց ընելիքով հիպոսացածները»⁹:

Ընդհանրապես կիրքը Օշականի վիպաշխարհի հոգեբանական հենակետն է. «Ինձի համար,- ասում է Օշականը,- կեանքին գլխաւոր հեղեղը սերմով ու արինով կը քալէ»¹⁰: Այնուհետև Օշականը հիշեցնում է, որ իր համար «գոնէ արուեստը սեռն է»¹¹, այդ համատեքստում կիրքը համարելով իր վեպի արարչանյութ. «Ա՛լ չեմ վերլուծեր անոր զգեցած այլազան տարագները: Այդ վէպերէն իւրաքանչիւրը մէյ-մեկ հզօր կիրքի բաբանին ներքեւ կը ծեծուի սկիզբէն մինչեւ վերջը: Կեանքը կի՛րք միայն: Ուրիշ ի՛նչ»¹²:

Քննադատ Շ. Տասնապետյանը ձգբրտորեն նկատում է, որ Օշականին հետաքրքրողը «էրոթիք նկարագրութիւնները չեն, այլ «կիրք»ին վերլուծումը, պեղումը»¹³: Հավելենք, որ Օշականը առավելապես պատկերում է հեշտանքի, մեղքի, ոճրի միջավայրը, արյան ու կրքի մուսուլմանական երանգները, որոնք կազմում են թուրքի ներքին կյանքի համայնապատկերը: Սեռային ենթագիտակցական աշխարհի վերծանման դիտանկյունից Օշականի արվեստը համադրելի է Ֆրոյդի գիտական ուսումնասիրություններին: Միաժամանակ նկատենք, որ, գեղագիտական կողմնորոշում լինելուց զատ, կրքի գերակայությունը Օշականի արձակումը Արևելքից ժառանգված, ոչ ստացական հատկություն է, կենսաբանական հոգեվիճակ, իսկ Օշականի աշխարհը, չնոռանանք, Արևելքն է: Այս ամենով հանդերձ՝ մարդու հոգին աստվածացնող կամ կործանող կիրքը Օշականի վեպում պետք է տարբերակել թուրքի ցեղային կրքից, ավելի

8 Տասնապետյան Շ., Յակոբ Օշականի վէպը, Պէյրուք, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1994, էջ 101:

9 Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. Ժ, էջ 9:

10 Օշական Յ., Մայրիներու շուքին տակ, Գրական գրոյց Յ. Օշականի հետ, գրի առաւ Բ. Թաշեան, Պէյրուք, տպարան Ալթափրես, 1983, էջ 21:

11 Նույն տեղում:

12 Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. Ժ, էջ 644:

13 Տասնապետյան Շ., նշվ. աշխ., էջ 28:

ստույգ՝ սեռային հիվանդագին մարմնաչից կամ անասնական, հակամարդկային բնագոյներից:

Թուրք տիպարի սեռային հոգեբանության ամենաբնորոշ հատկանիշներն են հեշտամուկությունը, բռնաբարությունը, ազգապղծական մտասևեռումը, արվամուկությունը, բռնի իգականացումը, ընդ որում, դրանք ոչ թե ցեղային հոգեբանության մասնավոր դեպքեր են Օշականի վեպում, այլ հանրային երևույթ ու բարք: Թուրքի սեռային բնագոյները հակված են արյան, սեռային գառածումը հաճախ դրսևորվում է գոհի լլկումով կամ սպանությանը: Կրքի և արյան, սեռի և ոճրի մի խառնարան է Էտհեմ բեյի («Սիլվեյման էֆենտի») դրյակը, որի միջոցով Օշականը երևան է բերում թուրքի ցեղային կենսակերպը՝ դրսևորելով իրեն ներհատուկ բացառիկ իմացականություն. «Եւ ոճիրը միշտ շրջուած կիրքն է, սեռին մէկ շենքը»¹⁴:

Էտհեմ բեյի սեռային բռնաբարություններից առանձնացնենք, օրինակ, արգանդասպանությունը, որին հոգեմղում է կենսաբանական բնագոյը: Նա եզրիպատացորենի կոճով խոցում է իր կնոջ՝ Սերվինազ հանըմի արգանդը՝ վերջինիս դատապարտելով դանդաղ մահվան, իսկ գործողության զգայարանը նրա կրտսեր քրոջը՝ Խալիտեին տիրանալու ազգապղծական մտասևեռումն է, ով միաժամանակ իր և Սերվինազի մոր՝ Նայիլեի կրքի պտուղն է:

Կրքերի թաքուն իրողությունը Օշականի վեպի հոգեղեն մթնոլորտն է: Օշականյան հոգեվերլուծության փուլերն ընդգրկում են «ոճիրէն առաջ, դէպի ոճիրը, ոճիրին մէջ ու անկէ վերջը»¹⁵ ժամանակային ամբողջականությունը, գիտակցական հոսքի զարգացման տրամաբանությունն ու հետևողականությունը: Էտհեմ բեյի հոգեմարմնական մղումները սկսվում և ավարտվում են ազգապղծական բռնաբարությամբ. քրոջ բռնաբարությունից ու սպանությունից մինչև իր նորապսակ հարսի հետ սեռական մեղսակցություն աներևակայելի ու երևակայելի ոճիրների մի ընթացք է, որ «Թուրք քաղաքակրթութեան դիրտը կը կազմէր, այս դարուն սկիզբը, կիրքէ, մեղքէ, անաստուածութենէ, անմակարդակութենէ գոյաւոր»¹⁶:

Կրքերի մուկության ու ապականության աշխարհում, բացահայտելով հերոսների կենսահոգեբանական մութ զգայությունները, Օշականը որոշ դրվագներում ներքին խտության հեղումը հասցնում է արտասովոր բանաստեղծականության, ինչը ձգողականության օրենք է դառնում օշականյան արվեստում: Հոգեբանական այդպիսի պահ է, օրինակ, Էտհեմ բեյի և Նայիլե հանըմի՝ խոշտանգողի ու խոշտանգվողի փոխձգողականությունը, որ Օշականի արվեստի գործությամբ այլակերպվում է խորհրդավոր բանաստեղծականությամբ:

14 Օշական 3., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, Խատ. Ժ, էջ 201:
 15 Նույն տեղում, էջ 198:
 16 Նույն տեղում, էջ 210:

յան: Դիվային էսթետիզմը կամ խոշտանգողի և խոշտանգվողի ձգողակա-
նությունը Օշականի արձակում դառնում է թուրքի ցեղային դիմագիծ:

Օշականի վեպում թուրքի սեռային գառաձուները, ցեղային սաղիզմը
լիարժեքորեն դրսևորվում են հայկական ջարդերի ժամանակ: Հայկական
կոտորածները, մանավանդ 1915 թ. ցեղասպանությունը, Օշականի համոզ-
մամբ, թրքության ինքնադրսևորման պատմական հարթակն են. «Ու մեր ժո-
ղովուրդը եղաւ գետինը, ուր թուրքերուն բնագոյները եւ մեր ժամանակի սկզ-
բունքները արձակ ասպարէզ գտան»¹⁷: Թուրքը Օշականի վեպում ցեղային
բնագոյների ոգին, ցեղի ձայնը կրում է որպէս հոգեբանական հենք: Սպան-
դը, խոշտանգումը, ջարդարարությունը թուրք տիպարի ազգային զգացում-
ների դրսևորումներն են, ընդ որում, մարդասպանության գործիքակազմից
որպէս տանջանքի զգայարանների բավարարման նախընտրություն առաջ են
մղվում կացինը կամ յաթաղանը. «Թուրքերը ջարդած են, վասնզի դեռ մօտն
են իրենց տափաստաններուն, որոնց արինախառն ու սերմնագէջ միազման
դեռ չէ աւուած անոնց հոգիներէն»¹⁸:

Թրքությունը՝ որպէս կենսահոգեբանական հավաքական տեսակ, և
թուրքական պետական քաղաքականությունը նույն քաղկացություններն են.
«Այս ամէնը՝ ներսէն, վասնզի թրքությունը, - նկատում է Օշականը, - բացառիկ
վիճակ մըն է, բացառիկ պայմաններու կարօտ, իր աճումի լիութիւնը գտնելու:
Կենքի սովորական ընթացքին, անիկա, միշտ թրքութիւնը, եթէ յիմար մոլե-
ռանդութիւն մը չէ, զանգուածին խղճմտանքներէն եռացող, պետական ու դի-
ւական կազմածէն սողոսկուն ու նենգ կեղծիք մըն է, խորապէս արեւելեան,
չըսելու համար բիւզանդական»¹⁹:

Բնաջնջման և զավթողականության հոգեբանությունը, ըստ Օշականի,
թրքության մեջ հասնում է վարդապետության աստիճանի: Թուրքերը ցեղաս-
պանությամբ տիրացան հայկական ու բյուզանդական պատմական հողերին,
բռնի կերպով թրքացրին քրիստոնեական քաղաքակրթությունը, բռնաձնշում-
ներով հավատափոխության ենթարկեցին քրիստոնյա զանգվածների: Թուր-
քիայում ոչ մի մշակութային- քաղաքակրթական արժեք թուրքական ոչինչ չի
պարունակում: Ահավասիկ մեր օրերում Ս. Սոֆյայի տաճարի վերածումը
մզկիթի. ևս մի ապացույց այն իրողության, որ թուրքը երբեք չի փոխվի, կամ,
ինչպէս Օշականն է ասում, «Թուրքին արինը դեռ չէ նստած»²⁰: Վերլուծելով
քրիստոնյա քաղաքակրթության բռնի թրքացման քաղաքականությունը՝ Օշա-
կանը նկատում է, որ «Բնատիպի վրայ իրենց յաւելումները, մանաւանդ Պո-
լիս, տխուր են՝ որքան բարբարոս»²¹:

17 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Բ, էջ 430:

18 Նույն տեղում, էջ 378:

19 Նույն տեղում, էջ 368:

20 Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. Ժ, էջ 160:

21 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Գ, Անթիլիաս, 1988, էջ 15:

Թուրքի ցեղային զգայական համակարգի ամենազարգացած զգայարանը, ըստ Օշականի վեպի, «տանջանքի զգայարանն է»²²: Թրքության տանջանքի զգայարաններն ու հայության «մեղքը» Օշականի վեպում ողբերգության հակակշիռ կողմերն են: Հայերը դատապարտվում են իբրև «քոմիթա», այսինքն՝ հեղափոխական («Ո՛ր հայը չէր ատիկա, դեռ մօր արգանդէն»²³), իբրև անհավատ, իբրև պարզապես հայ: Թուրքական տանջանքի զգայարանների տիպիկ պատկերներից է բանտը, որի համեմատ «Գուցէ դժոխքը ըլլար աւելի դիւրին տեղ մը»²⁴: Թուրքի տանջանքի զգայարանները Օշականի վեպում մշտապես գործող երևույթ է, և նախօրինակ պատկերներով Օշականը ներկայացնում է Հայոց ցեղասպանության համայնապատկերը: «Մնացորդաց» վեպում հեղափոխական Մաթիկ Մելիքխանյանցի նահատակության առթիվ Օշականը գրում է, որ «Թուրքերը անոր վրայ գործադրեցին մէկը իրենց ամէնէն սառն ոճիրներէն, որոնք փառքն ու պարծանքը եղան անոնց պետական զգայարանքին»²⁵: Հարյուր մեկ տարվա բանտարկության դատապարտված Հաճի Մուրատի՝ հայ ֆիդայու նախակերպարի նկատմամբ ևս գործադրվում է թուրքական իրականության մեջ ամենատարածված տանջանքի միջոցը. «Աճելիով, իր իսկ ձեռքովը թոցուց կէտը կապեալին սեռական անդամին՝ զգույշ ու խոնարհ: Հաշին իր ողջ ձգել զայն: Ու լրացնելու համար իր թրքութիւնը, փրցուցած կտորը թխմեց անոր կուղպ բերնէն ներս, դանակ արցնելիք պողպատ սլաքով մը անոր ծնօտները փաշատել է տորք»²⁶:

Թուրքի ցեղային հոգեբանության վառ հատկանիշներից Օշականի վեպում պատկերված է նաև կրոնական մոլեռանդությունը՝ հայատյացության մտասևեռումով: Թուրքը «Հաւատքին ու հայրենիքին կը ծառայէ, որ անհաւատ մը կը պատժէ»²⁷: «Կեաւորի», նամանավանդ հայի գոյությունը թուրքի համար ատելության հնոց է Օշականի վեպում. ««Գուրան»-ով երդում էր ըրած քոմիտաճիները խորովել ու անոնց ոսկորներուն փոշին իսկ արժանի չընել գերեզմանին եւ որ անհաւատները անձիտելու համար պիտի չվարանէր գիւղաքաղաքը բանտ վերածել... ու անոր երիտասարդները գառազեղել, աղջիկները բաժանելու համար տասնէն իննսուն տարեկան բարի, սուրբ միսիլմաններուն»²⁸: Անհավատի նկատմամբ ատելությունը սրբազան զգացում է թուրքի ազգային հոգեբանության մեջ, նաև հանրային երևույթ, պետականորեն խրախուսվող քաղաքականություն:

Օշականյան թուրքի ցեղային հոգեբանության հատկանիշներից են նաև կեղծիքը, ուրացումը, նենգությունն ու անգերազանցելի դիվանագիտությունը:

22 Նույն տեղում, էջ 19:

23 Նույն տեղում, էջ 28:

24 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Բ, էջ 30:

25 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Գ, էջ 154:

26 Օշական Յ., Հաճի Մուրատ, Հարիւր մէկ տարուան, Անթիլիաս, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի տանն Կիլիկիոյ տպարան, 1996, էջ 83:

27 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Բ, էջ 348:

28 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Ա, Անթիլիաս, 1988, էջ 473:

նը. «Այն ժողովուրդն է ասիկա, որ կրցաւ պարզ մնալ մեր բնաջնջումը իբր յղացք, յետոյ՝ որոշում, յետոյ՝ իրողութիւն ընդունելէ ետքը»²⁹, - գրում է Օշականը: «Թուրքերը կը մեղադրեմ ոչ թէ թուրք ըլլալուն, այլ մանավանդ ասիկա ծածկել ջանալուն»³⁰, - շարունակում է Օշականը՝ թրքոյթյան ենթագիտակցական ու գիտակցական մակարդակների համաչափութեան հիման վրա սուր շեշտադրումներ ուղղելով մանավանդ գիտակցականի դեմ: Հանցանքն ու ոճիրը ծնվում են թուրքի կենսաբանական բնագոյների ներքին մղումից, անգիտակցական մակարդակի մտասևեռումներից, արյան ձայնից, մինչդեռ ուրացումն ու նենգափոխությունը գիտակցական մակարդակի դրսևորումներ են:

Ընդհանրապես Օշականի վեպում պայմանական է «թուրքական հոգեբանություն», «թուրքական բարք», «թուրքական քաղաքականություն» հասկացությունների տարանջատումը. դրանք միևնույն բաղկացութեան տարբեր ձևակերպումներ են, այլ կերպ ասած՝ թուրքական ցեղային հոգեբանությունը գերակայում է թուրքական բարքերում, պետական քաղաքականութեան բոլոր ուղղություններում. «Ցեղեր կ'ոչնչացնեն եւ մեղքը կը մերժեն անլուր ուրացումով»³¹, - գրում է Օշականը: - «Ու կ'ուզեմ, որ լրբութիւնը, նենգութիւնը, վայրագութեան ու կեղծիքի հոյակապ խառնուրդ թրքական փոլիթիքան չանցնի աննշմար մերիններէն»³²: Բարոյական չափանիշները տեղ չունեն թուրքական ազգային հոգեբանական կերտվածքում, նրանց ազգային գիտակցությունը բացառապես կրում է բնագոյական բնույթ: «Տափաստանեան գագանին»³³ հոգեբանական նախատիպությունը՝ որպէս ցեղային դասական տիպար, կազմում է թուրքական ազգային ոգին, ազգային զգացումը, նաև կրթադաստիարակչական համակարգի միջուկը. «Անոնք անխախտ կը պահէին ոսկեզօծ հաւատքը տեսնելու, կերտելու գերազանց յաղթանակը... երբ Արևելքը ամբողջ (որ իրենց եռանդին մէջ բնակուած կ'ընէին թուրքերէ...) իրենց առաջնորդութեամբը մէկ շնչով ոտքի պիտի խոյանար Արևմուտքի վրայ, վերադարձնելով հսկայ դարը, նուաճումին ու արիւնի նախճիրին, փոխադրելով կայսրութեան սահմանները շատ ակելի հեռուն, քան պատմութեան դասով, կալիճին կեցած գիծը: Ասիկա ուխտն էր, գերագոյն հաղորդութիւնը, ճինկիզներու սարսափին վերակերտումը իրենց հարազատ պապերուն արիւնէն... Օրը մը քաղաքական կամ զինուորական ասպարէզին համար պատրաստուող այդ երիտասարդութիւնը արժեցուց ցեղային ուխտը, անգէն ժողովուրդներ մորթելու փառքին մէջ գտնելով անգերազանցելի հերոսութիւնը նախնիքներուն»³⁴:

29 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Գ, էջ 19:

30 Օշական Յ., Սիւլէյման էֆենտի, Հարիւր մէկ տարուան, էջ 235:

31 Նույն տեղում, էջ 291:

32 Նույն տեղում, էջ 235:

33 Նույն տեղում, էջ 53:

34 Նույն տեղում, էջ 253:

Թուրքական ազգային զգացումը՝ տիրելու և մորթելու ցեղային հոգեբանությունը, թուրքերի պատմության գաղափարական առաջնորդն է, ընթացքը պայմանավորող նախահանգամանքը. «Անոնց պատմությունը արդարության անունով գործուած հսկայ ոճրապատում մըն է: Այս մտայնութիւնը ալ մասն է անբաժան անոնց հոգեբանութեան»³⁵: Զուտ ցեղային հոգեբանության բաղկացուցիչ գաղափար է նաև թուրքական ազգային ինքնարժեքության զգացումը. «Իրենց նուիրական ցեղը: Ասիոյ մեծ աղանանդը: Եւրոպական մշակոյթին արմատը: Անոնք յաւակնութիւններ չեն, այլ թրքաբար սպացուցուած ճշմարտութիւններ»³⁶:

Թուրք ցեղային տիպարի օշականյան բացահայտումները հանգեցնում են հակամարդու փիլիսոփայական հասկացությանը: Հակամարդու փիլիսոփայությունը բարձրանում է անզեն ժողովուրդներ սադիստաբար ցեղասպանելու և դա սառնասրտորեն ուրանալու պատմության ներքին հոգեբանական հենքի վրա: Խղճնտանքն ու ինքնահարգանքը՝ որպես հոգեկան տարրեր, իսպառ բացակայում են թուրքի ազգային գիտակցության մեջ ու հոգեբանական կերտվածքում. «Երբ մեր ժողովուրդը կ'ոչնչացնէին, չգտնուեցաւ մէկ հատիկ մարդ, որ խռովէր իր խղճնտանքէն: Ամբոխային հոգեբանութիւնը չի բացատրեր սա սառնութիւնը: Ու զայն հասկնալու համար պէտք է իջնալ մեզի անծանօթ, դժուար, արդի մշակոյթին հետ ալ անհաշտ հոգեկանութիւններու... Պէտք է սպասել, որ այդ ժողովուրդէն ծնի մարդը, որ խաբեբայութիւնը, աւարառութիւնը, դաւը, անգթութիւնը չվերածէ շրջուած առաքինութեան, քաղաքային հասունութեան եւ իմաստութեան, ու քչիկ մըն ալ ամչնայ, աշխարհին դէմ իր սուտը եօթնարփեան ճշմարտութեան մը պէս սրբագրած պոռալու»³⁷:

Բռնությամբ տիրանալու և վայելելու բուն ասիական հոգեմղումներ ունեցող թուրքը Օշականի վեպում չունի և չի ընդունում հոգեկան արժեքի գոյությունը. «Քսութիւնը, խառնակչութիւնը, դէմքը խնամելը, սողոսկումը, իգացումը»³⁸, ինչպես Օշականն է ընդգծում, դասական ճշմարտություններ են թուրք սերունդների աշխարհայացքում:

Օշականը թուրք ազգային հավաքական տիպարի հոգեվերլուծություններին համընթաց պատկերում է նաև անհատների ու առանձին խավերի հոգեբանությունն ու կենցաղավարությունը: Օշականը ցույց է տալիս, որ ոճիրների խրախուսումը թուրքերի ներքին կյանքում պետական քաղաքականություն է, վարչակարգի հոգեբանություն, նամանավանդ հայկական ջարդերի նախագարգացում:

35 Նույն տեղում, էջ 229:
 36 Նույն տեղում, էջ 252:
 37 Նույն տեղում, էջ 265:
 38 Նույն տեղում, էջ 266:

Թուրքական պետությունը կարիք ունի Էտհեմ բեյի նման անձանց, ովքեր անցել են «մեղքին, ոճիրին, հոգեկան հիւժախտին ու բարոյագերծման բոլոր աստիճաններէն»³⁹. «Մեղքը, անասնությունը, արին թափելը, սեռային կատաղի մրցանքները եւ գողություններն ու լրբությունը հնոցներ էին, ուր պիտի թրծուի այդ մարդոց անզգամությունը ու պիտի հանդերձուի ապագայի իր սպանդին: Այսպէս էր քալեր թուրքերու բռնապետական վարչաձեւը... Արեւելեան նահանգներու մէջ այդ հեռատեսությունը իր պտուղները պիտի տար, հայերը կոտորելու պաշտօնը յանձնելով անոնց մաքուր ձեռքերուն: Աւելի յետոյ 1914–1915–ին բանտերը պարպող եւ անասունները զինելով անմեղ բազմութեանց վրայ արձակող ոգին ուրիշ ծագում չունի»⁴⁰:

Էտհեմ բեյի սեռային լլկումները, ասպատակությունները, ոճիրները Օշականի վեպում դառնում են Հայոց ցեղասպանության նախապատկերներ: «Մեղքին բարձրագոյն համալսարանէն շրջանաւարտ»⁴¹ Էտհեմ բեյը թուրքական ազգային դասական հոգեկերտվածքը կրող կերպար է, ցեղային տիպար՝ շրջապատված իր նման ստորակարգ խառնամբոխով. «Մարդ մորթելու գործին առջեւ, իր անձին փորձառութեամբը, անիկա կ'ուրանար քաջութիւնը, որ վտանգաւոր էր երբեմն՝ ձեռնարկներ վիժեցնելու աստիճան: Կատարեալ ասպատակին աչքը կուշտ կ'ըլլայ արիւնէ, այսինքն՝ չի մորթեր անձնատուրը, գերին: Այս օրէնքով, անոր պէտք եղածը սա ստորին խառնակոյտն էր, որ աւարին ու կրակին հետ, պիտի չընկրկէր սեռին ալ կրակէն ու համբաւեալ կիներու վայելումը խայծ ունենալէ ու զայն իրագործելէ ետքը, առանց թարթելու պիտի սպաննէր զանոնք»⁴²:

Թուրքական տարբեր խավերի հոգեբանության և դրանից բխող կենցաղավարության պատկերների մեջ Օշականը առանձնադիտում է մոլլաների, ավագ պաշտոնատարների, զինվորական հրամանատարների, մտավորականների, ինչպես նաև կանանց հոգեկան կյանքը:

Մոլլաները զինվորականությունից հետո ամենաշփացած և վարչակարգի կողմից հովանավորված խավն են Թուրքիայում, որոնք «կը քարոզեն սրբազան ստելությունը անհաստին»⁴³, և որոնք «անպաշտպան որբերը կը պղծէին նահատակ զինուորականներու աղօթքը անպակաս, ոտքի ելլելէ վերջ, քաշելով հատիկ–հատիկ սատափեայ համրիչը անձառ հեշտութեամբ, փառք տալով փատիշահին՝ ինչպէս Ալլահին, արժանի կեցուցած ըլլալուն սա սրբութեան, սա պատիւին, իրենց յորդ, հոտած մարմինները»⁴⁴: Ավագ պաշտոնատարները, որոնք վարչակարգի պիտիներն են՝ «ճրի ուտողի փայլով»⁴⁵, ղեկավար աստի-

39 Նույն տեղում, էջ 282:

40 Նույն տեղում, էջ 293:

41 Նույն տեղում, էջ 322:

42 Նույն տեղում, էջ 307:

43 Նույն տեղում, էջ 257:

44 Նույն տեղում, էջ 256:

45 Նույն տեղում, էջ 257:

ճաննների են հասնում՝ գործադրելով իրենց բոլոր «առաքինությունները», «ըսել կ'ուզեմ՝ քսութիւնը, երեսպաշտութիւնը, ձկնութիւնը, հոտառութիւնը, անպատկառութիւնը կամ սուտ հաշուած խոնարհութիւնը»⁴⁶, «անձագ ու մշտաբողբոջ, մանաւանդ սեռային գեղձերէ, ձեռքերնին դիզած իրենց փորակոյտին, աչքի պոչով որոշելով տղաքը, թիկնապահ, յետոյ՝ սենեկապան, յետոյ՝ անկողինցու, խորապէս արհամարհելով ուսումին հովը անոնց վրայ»⁴⁷: Թուրքի հոգեբանության պատկերները Օշականի վեպում գեղարվեստական ենթատեքստում ունեն գիտական վերլուծաբանական արժեք ու պատմակենսագրական հենք: Օշականը ապրել է այդ միջավայրում, անձամբ ճանաչել իր հերոսներին, իրեն ներհատուկ խորաթափանցումներով վերակերտել թուրքական իրականությունը՝ բարքերի, տիպարների հոգեբանության, գործողությունների ներքին զգայարանների, մտայնությունների կոտ համակարգով:

Տիպական բնութագծերով են ներկայացված նաև թուրք զինվորական հրամանատարները՝ «ձայնին անաւարտ գալիպրովը կասկածելի»⁴⁸, որոնք «բռնութեան իրենց տուրքերը կը պահպանէին ամէն թուրքի նման»⁴⁹, և մտավորականները՝ «թիով այնքան քիչ»⁵⁰, «մեծերու մօտ նուաստ, ուսանողներուն առջեւ՝ մեծամիտ ու սոնք»⁵¹:

Հոգեմարմնական բացառիկ յուրահատկություններ ունի թուրք կինը, որին Օշականը, ցեղային ընդհանրական բնահատկանիշներով հանդերձ, դիտում է որպես ընտանիքի և հանրության զոհի. «Ոչ մէկ ազգի մէջ, կինը՝ քաղքենին կ'ակնարկեմ - այնքան շատ, ուժով, կատարեալ կին է, որքան թուրքերուն մէջ: Այս կատարելութիւնը կ'առաջանայ մինչեւ ինքնավտանգում, երբ խելայեղ, այդ կատարելագործուած, զաղփաղփուն հանրմները բաց ծով կ'իջնեն իրենց սեռային կողմնացոյցներէն բռնավար: Արգելափակումը անոնց մէջ սրած է սեռային ջիղերը, անհամեմատ նրբութեամբ: Միւս կողմէ՝ ամուսնական կենցաղի մէջ կ'իրարկուած օրէնքները զայն կը վերածէն անօրինակ կենդանիի մը, որուն գերագոյն մտահոգութիւնն է ամէն բոլայէ ըլլալ աւելի ցանկալի, աւելի համով, աւելի գրգռիչ: Անկողինի գիտութիւն մը, մասնագիտութիւն մը, մագիստրոսութիւն մը զանոնք շեղած է կեանքին միւս հետաքրքրութիւններէն»⁵²: Թուրք կնոջ գերագոյն ցանկությունն է լինել քրիստոնյա տղամարդու հետ, թուրք հանրմների կյանքում տարածված երևույթ է հրապուրանքով մեղքի տակ գցել իրենց քրիստոնյա ծառաներին՝ անտեսելով վտանգն ու սպառնալիքը: Սարայլը հանրմի և Ավետիսի, չերքեզուհի Սանամի և հայ «ասպատակ» Հաճի Մուրատի հարաբերությունները քրիստոնյայի հանդեպ թուրք կնոջ առեղծվածային տար-

46 Նոյն տեղում:

47 Նոյն տեղում, էջ 258:

48 Նոյն տեղում, էջ 259:

49 Նոյն տեղում, էջ 258:

50 Նոյն տեղում, էջ 259:

51 Նոյն տեղում:

52 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Բ, էջ 469:

փանքի պատկերներից են: Օշականը բացահայտում է նաև թուրք կնոջ բազմա-
շերտ ողբերգությունը՝ հանրային բարքերի, ամուսնական ներքին կյանքի, բռնի
ամուսնությունների ու սեռավրկումների, կրոնապետերի ու պաշտոնապետերի
կողմից բռնաբարությունների, իրավագրկման դիտանկյուններից, որոնց
կանդրադառնանք դեռ թուրքական բարքերի վերլուծության առթիվ. «Թուրք
հանրմները, երբ սեռին երկնաբարին լծուած խանդավառ գերուհիները չեն ի-
րենց տերերուն, դժբախտագոյն կիներն են Արեւելքին: Անոնց համար է «ուսկի
վանդակ» բացատրութիւնը»⁵³:

Թուրքի ցեղային տիպարի պատկերումը Օշականի վեպում հասնում է
բացառիկ խորաչափության ու համապատկերայնության՝ թուրքական տար-
բեր խավերի հոգեբանական առանձնահատկություններով ու ընդհանրութ-
յուններով, կենսաբանական բնագոյներով ու մղումներով, մտայնություննե-
րով ու բարքերով: Հերոսների հոգեբանական ընդերքի բացահայտման հիմ-
նական գործոնը Օշականի վեպում հոգեբանական վայրկյանն է, ինչը ներքին
խտության հեղումն է՝ օշականյան արվեստի կարևորագոյն հղացքը: Հոգե-
բանական վայրկյանները Օշականի վեպի ընդհանուր կառույցն են, արտաքին
գործողությունների նախահանգամանքը, հերոսների արյան տրամաբանութ-
յան հոսքը: Գ. Պըլտյանը նկատում է, որ «Արեան տրամաբանութեան մէջ ան-
հատը ոչինչ է, ցեղը՝ ամէն բան: Ասոր համար ալ, պեղումը արեան խորու-
թիւններուն մէջ է՝ նաև փնտռութիւնը «ցեղին ոգիին»»⁵⁴: Հոգիների խորաչափ-
ման գրական մեթոդը Օշականը համարում էր «իմաստը նոր վեպին»⁵⁵: Գի-
տակցական հոսքի մեթոդի կիրարկմամբ Օշականը միաժամանակ նորոգում
է հայ վեպի կառուցվածքը, բերում նոր համակարգ, նոր մտածողություն ու
ձև:

Օշականի կերպարային համակարգում կան նաև թուրքական դասական
հարացույցից շեղված հերոսներ՝ անհատներ և խմբեր, որպիսին են Սուլեյ-
ման էֆենդին կամ Հայոց ցեղասպանության ժամանակ հակացեղասպանա-
կան վարք դրսևորած թուրքական բացառիկ խմբեր. «Անշուշտ, եղան մարդեր
ալ, որոնք հարիւր հազարներու մէջէն, ով գիտէ՝ ի՞նչ զսպանակներու տակ,
անջատուեցան ցեղային միջինէն, ու Աղէտէն իսկ յորձանքին մէջ, ջարդարար
բանակէն անցան ջարդուողներու կողմը... Եղան, սակայն, այն միւսներն ալ,
դարձեալ հարիւր հազարներու մէջէն առանձին, որոնք մանկիկներ որդեգրե-
ցին, ճամբաներուն վրայ անոնց մայրերուն՝ հայրերը արդէն մաքրուած էին
պետական, այսինքն՝ համազգային վճիռով՝ կոտորումը հրամայելէ կամ առ-
նուազն անտարբեր դիտելէ ետք»⁵⁶:

53 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Գ, էջ 506:

54 Պըլտեան Գ., Օշականի վեպը, «Ազդակ», Պէյրուք, 1973, օգոստոս 11:

55 Օշական Յ., Մայրիներու շուքին տակ, էջ 16:

56 Օշական Յ., Սիւլեյման էֆենտի, Հարիւր մէկ տարուան, էջ 236:

Սուլեյման էֆենդիի բարոյական ընդվզումները Օշականի վեպում շեղումներ են թուրքի պատմական դասական բնութագրից: Նա սպանում է իր բարոյական անկումների ու ուժիքների սահմանն անցած հորը՝ Էտհեմ բեյին՝ «անկէ զգացած անհուն գարշանքին իբր հակադարձ, ուրանալով իր ծնունդն ու ստորագրելով մօրը մականունով»⁵⁷: Սուլեյման էֆենդին Օշականի գաղափարակիր թուրք հերոսն է, որին պատկերել է բացառապես դրական հատկանիշներով, թուրքական հանրային չարիքների դեմ ընդվզումներով. «Բոլորին մտքին մէջ թարմ էր անոր հսկայ, հոյակապ պոռթկումը կայսրութեանը վերէն վար պլշկող արատին դէմ... Պատուախնդիր կատաղութիւնը երիտասարդին, որ չէր ընկրկած, դատարանը լեցնող պաշտօնական ու ոչ, ասագ կամ չասագ անձնատրութեանց երեսին պոռալու իրենց մեղանքները, ծնրադրական ու գետնաքարշ ստորանկումները, մարդը իրմէն զգուցնող, բայց այդ զգումնքը իբր գերագոյն յուռութք, պաշտօնի, վարկի, դիրքի բարձրօրէն շահագործող անորակելի մտայնութիւնը»⁵⁸: Օշականը, իր հերոսի հանդէպ թվացյալ ակնածանքով հանդերձ, թուրքական ոգու կերպափոխության առումով տարակուսում է, երկնտում՝ վերջնական եզրահանգման չգալով. «- Կոտրա՞ծ էր թուրքը այս տղուն մէջ... Թուրքը կոտրա՞ծ, առնուազն փոխուա՞ծ»⁵⁹: Օշականի կասկածը հիմնավոր է պատմական իրողությունների դատողական հենքով, երբ, օրինակ, «Թուրքերը Սահմանադրութիւն հռչակեցին, խղճմտանքի ազատութիւնը տարփողեցին, ցեղերու եղբայրութիւնը երգեցին, բայց նախակրթութիւն իսկ չստացած իրենց տղոց մէջը մշակեցին, վերնադիր սաստկութեամբ, նոյն այն ժահիրը, որով թունաւոր վէրք մըն է անոնց պատմութիւնը»⁶⁰:

Միանշանակ է, որ պատմական մտահայացքն է Օշականին հանգեցնում թուրքական ոգու կերպափոխության հայեցողության հարցականին:

2. Մտայնությունները

Թուրքերի դարավոր երազը՝ Մեծ Թուրանի ստեղծումը, իր ճանապարհին ոչ մի խոչընդոտ չի հանդուրժում, ոչնչացնում է բոլոր արգելքները՝ ընդհուպ մինչև ժողովուրդների բնաջնջում: Ապացույցը՝ հայ և հույն ժողովուրդների ցեղասպանությունը 1915 թ., դրանից առաջ և հետո, ցեղասպանություն՝ բոլոր ուղղություններով՝ ֆիզիկական, հոգևոր-մշակութային, բնիկ ժողովուրդների ոչնչացմամբ նրանց պատմական հայրենիքի բռնազավթում, ունեցվածքի թալան, հիշատակների բնաջնջում մինչև վեր-

57 Նույն տեղում, էջ 224:

58 Նույն տեղում, էջ 231:

59 Նույն տեղում, էջ 234:

60 Նույն տեղում, էջ 234-235:

ջին մնացորդներ: Օշականի վեպում թուրքի ցեղային մտայնությունների ազդակը նրա կենսաբանական հոգեբանությունն է: «Մնացորդաց» վեպում երիտասարդ հազարապետ փաշան՝ Գերմանիայում կրթված, Արևելյան խնդրի մասնագետ, Պոլսի գինվորական վարժարանի դասախոս, որը «թուրք էր, սակայն, այսինքն՝ հայուն մօտ ամէն բան տեղային մշուշէ մը տեսնելու դատապարտուած»⁶¹, բանտում հայ հեղափոխական Մաթիկ Մեփրիանյանցի հետ երկխոսության ժամանակ, երկխոսություն, որով Օշականը բացահայտում է թուրքի «նորոգված» թրքությունը, այսինքն՝ «ուղեղի» թրքությունը, ասում է. «Մշակոյթը մեզի համար ուրիշ յղացք կը բովանդակէ: Անիկա, սուրը ձեռքին երկարածգելն է ինքզինքը միշտ, աւելի շատ հողերու վրայ... Մշակոյթը բանակ է»⁶²:

Դատելով Հայկական հարցի շուրջ՝ Արևելյան խնդրի թուրք մասնագետը գղջում է հայությանը «բնաջինջ ըրած չըլլալուն անհետեթ, ապուշ մեղքի»⁶³ համար՝ գտնելով, որ «Աշխարհի բոլոր բարի կամեցողութիւնները անկարող պիտի ըլլային մեր ճամբուն վրայ հանդուրժել ձեզ պէս արգելք մը»⁶⁴: Օշականը երևան է հանում թրքության ցինիզմը՝ չափելով այն թուրք փաշայի անպատկառության սահմանով: Վերջինս արհամարհում է բարոյական բոլոր կանոնները, ծաղրում հայերի ազգային դյուրահավատությունը ամերիկացի «շարլաթան միսիոնարներին»⁶⁵ կամ «Արարատին բարձրացող Նոյեան տապանին՝ անգլիական նավատորմին»⁶⁶ հանդէպ: Օշականը երկխոսության միջոցով վեր է հանում նաև մեր ազգային խաբվածության, բայց չօտարման դրաման, արևմտյան և ռուս դաշնակից ուժերի ուխտադրժությունն ու հայության բացարձակ անօգնականությունը ճակատագրական պահերին: Ընդգծելով հայության միայնակությունը՝ թուրք փաշան հեգնում է Խրիմյանի՝ «թուղթի կտորի մը վրայ վեց տողնոց ողորմութեան մը խոստումը»⁶⁷, եվրոպական հյուպատոսների նկատմամբ մեր կույր հավատը, որոնք «դիւաններու տնօրէններ են ու թուղթի աշխատատոր», և մենք պիտի մեռնենք, «որպէսզի անոնք այդ դէպքերը տոքիւմանի վերածեն»⁶⁸:

Թուրքը դատապարտում է մանավանդ հայ-ռուսական հարաբերությունները՝ համարելով, որ ռուսը միաժամանակ հայի և՛ խորհրդատուն է, և՛ թշնամին: Այս դատողությունները թուրք փաշային ցինիկաբար հանգեցնում են այն համոզմունքին, որ հայությունը, ելնելով իր անտեր վիճակից, պիտի համակերպվեր իր գոյակերպին, այսինքն՝ շարունակեր ապրել գե-

61 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Գ, էջ 173:

62 Նույն տեղում, էջ 236:

63 Նույն տեղում, էջ 237:

64 Նույն տեղում, էջ 259:

65 Նույն տեղում, էջ 237:

66 Նույն տեղում:

67 Նույն տեղում, էջ 238:

68 Նույն տեղում, էջ 247:

րության մեջ, առանց թուրքի դեմ հեղափոխական շարժման, առանց ֆիդայական պայքարի, որոնք, ըստ նրա, խորացնում են «խրամատը երկու ժողովուրդներու միջեւ»⁶⁹: «Հաճի Մուրատ» վիպակում, հայ հեղափոխական շարժման նկատմամբ թուրքական այս մտայնությունը նկատի ունենալով, Օշականը գրում է. «Իրենց կողմէ հպատակներու պարտադրուած կենցաղը- բայց անվերաքննելի, սուրբ, տիրաբար արդար, քանի որ շնորհը կ'ընէր անոնց, կրելու՝ իրենց գլուխները իրենց ուսերուն վրայ: Ողբերգական է այս մտայնութիւնը, բայց ճիշդ»⁷⁰: Օշականը մեր ազգային վրիպանքն է համարում այդ իրողությունը չընդունելը՝ հավելելով, որ «Կարտակախին Արեւմուտքին դարպասող մեր ալ դիւանագիտութիւնը, որ մեզ յիմար ըրաւ վարդապետներ պտտցնելու մայրաքաղաքէ մայրաքաղաք ու արժէք տալու դիրքերու մէջ ոսկեգօծ գաղափարներու: Այս երկու հիմնական հաստատումները կը կազմեն մեկնակէտը նոր շրջանի մեր հզօրագոյն աղէտին»⁷¹:

Թուրքական ազգային-պետական կեղծ գաղափարախոսությունը դարերով թուրքերի մեջ ամրագրել է այն մտայնությունը, որ հայերը յուրացրել են իրենց պատմական հողերը՝ նրանց հանդէպ սերմանելով ազգային մոլեռանդության հասնող ատելություն. «Թուրք գեղացին սորվեցաւ նայիլ իր դրացի հայու հողին իբր ապրանք մը իրմէ կորզուած: Չէ՞ որ իր պապերունն էր անիկա, անոնց պապի արիւնովը շահուած ու իր անխելքութեանը, բարութեանը, մարդկային մեծանձնութեանը միջոցով անցած կեալուրին»⁷²:

Զավթողական ու ցեղասպանական մտայնությունները թուրքական քաղաքականության շարժիչ առանցքն են: Թուրքական ազգայնամուտական գաղափարախոսությունը պետականորեն հայրենիք է հռչակում բռնազավթած հողերը և ցինիկաբար հայտարարում, թե «Մենք մեր հայրենիքին մէկ փշուրն ալ վճռած ենք չզիջել ուրիշին»⁷³: Հայկական հարցին թուրքական պետական գաղափարախոսությունը հակադրել է Թուրքական դատը՝ այն հռչակելով իրենց «գերագոյն կրօնքը»⁷⁴, սպառնալով, որ «անողոր կրունկներով պիտի ձգմուին այդ դատին բոլոր թշնամիները»⁷⁵:

Հայության հանդէպ թուրքական կարծրացած մտայնությունները հստակ ռազմավարական հիմնանպատակ ունեն, ինչպէս «Մնացորդաց»-ի հազարապետ փաշան է դատում՝ «բնազդական ատելութիւնը մշակուած,

69 Նույն տեղում, էջ 241:

70 Օշական Յ., Հաճի Մուրատ, Հարիր մէկ տարուան, էջ 29:

71 Նույն տեղում:

72 Նույն տեղում, էջ 13:

73 Օշական Յ., Մնացորդաց, հատ. Գ, էջ 263:

74 Նույն տեղում, էջ 288:

75 Նույն տեղում:

վճռական ու անողոք ձեռի մը վերածել»⁷⁶: Սա 1915 թ. քաղաքական նախապատրաստության բազմաթիվ փաստարկներից մեկն է միայն: Մեծ Թուրանի գաղափարախոսությունը թուրքական ազգային-քաղաքական ռազմավարության հիմնակետն է, և Օշականը ցույց է տալիս, որ պանթուրքիզմը և թուրանիզմը՝ որպես փոխլրացնող հայեցակարգեր, կազմում են նաև թուրք սերունդների դաստիարակության ազգային հենքը՝ դեռևս դպրոցից նրանց գիտակցության մեջ զարգացնելով տիրելու և վայելելու մտայնությունները. «Ամենէն չոր ուսուցիչին իսկ բերանէն ի՞նչ հոյակապ էր «յառաջը», իրենց բառով՝ արշը, դէպի սիրտը երեք աշխարհներուն, արիւնի, միսի, հեշտութեան ու ոսկիի երբեակ մեծ գետերէն զգլխուած, Դանուբէն ու Եփրատէն եւ անմահ Նեղոսէն: Հարցուցէք ռեւէ թուրքի իր դպրոցական շրջանէն իր տպաւորութիւնները: Ձեզի տալիքը ուրիշ քիչ բան է, քան սա արշաւը կաւիճին սլաքովը, սեւ տախտակներու վրայէն.... Ամէն տղայ երդում կ'ընէր իր երիվարը Դանուբէն ջրելու: Ու կը հաւատար Գահիրէի պալատին մէջ խոսուող թուրքերէնին գեղեցկութեան»⁷⁷:

Մեծ Թուրանի երազը, որ, ինչպես Օշականն է նկատում, «Թուրքին խորագոյն զգայական իրականութիւնն է, սեռէն եւ երկինքէն ետքը»⁷⁸, և նրանց հոգեբանության մեջ որպես համոզմունք պետականորեն ամրագրված այն մտայնությունը, որ «Թուրք բանակը անպարտելի էր»⁷⁹, փոխլրացվելով թուրքի ցեղային կենսաբանական բնագոյներով, դառնում են Հայոց ցեղասպանության և Հայկական լեռնաշխարհի բռնազավթման նախահանգամանք, ինչը և իրագործվեց 1915 թվականին:

Թուրքական մտայնությունների համակարգում Օշականը առանձնադիտում է նաև «անհավատների», այն է՝ քրիստոնյաների մահմեդականացման խնդիրը, ինչը երևան է հանում այլադավանության հանդեպ ռասիզմը, այլատյացությունն ու անհանդուրժողականությունը թուրք ցեղային տիպարի մտահայացքում: Մահվան դատապարտված հայ երիտասարդի՝ Սողոմի հավատափոխության՝ որպես փրկության նախահանգամանքի մեջ Օշականը միաժամանակ բացահայտում է իրողության ներքին ու արտաքին կողմերը: Հայ ինքնության կորուստը, ըստ Օշականի, սկսվում է հայ ոգու ներքին ուրացումից: Այսպես՝ Ավետիսը՝ խարբերողի քրիստոնյա հայը, հանգամանքների պարտադրանքով ընդունել է իսլամ միայն արտաքին իրողությամբ, իսկ ներքին իրողությամբ պահպանել է հայկական ոգին, մինչդեռ Սողոմը կորուսյալ հայ հոգի է, քանի որ մահմեդականացել-թրքացել է նաև ներքին իրողությամբ. ««Դժոխք»ին մէջ, անիկա թրքացած փաշայի մը հոգեբանութեամբը պիտի մասնակցէր տարագրութեան եւ պի-

76 Նույն տեղում, էջ 270-271:

77 Օշական Յ., Սիլվեյան էֆենտի, Հարիր մէկ տարուան, էջ 237-238:

78 Նույն տեղում, էջ 251:

79 Նույն տեղում:

տի իյնար Տեր-Զօրի դաշտին, ինքնասպան, ջայլին մէջը մեռնող իր քոյրերուն, որոնք տէր-ողորմեան երգեր էին հրացաններուն համազարկին տակ ու յուզեր այդ գերմանացած գիտունը մինչեւ իր ընդերքները»⁸⁰:

Ներկայացնելով հայ-քրիստոնյա-նախամահ և թուրք-մահմեդական-փրկություն երկբևեռ բախումը Սողոմի և նրա մոր մտային աշխարհներում՝ Օշականը ընդամին առաջադրում է հայ եկեղեցական «երկնաբաղձութեան» խնդիրը, «տղուն հոգին կորուստէ ազատելու համար»⁸¹ զուտ կրոնական, ազգային բաղադրիչից հեռու մտայնությունը. «Մենք կ'ապրինք ոչ թէ մեր աշխարհին համար... այլ կ'ապրինք օր առաջ հասուննալու համար երկինքին վայելումին: Ու մեր նահատակութիւնը ատով կը զատուի ուրիշէն»⁸²: Այս համատեքստում Օշականը բացահայտում է նաև մահմեդականացման ողբերգական ընկալումը հայ իրականության մեջ, այն անարգանքը, «որ կը զարնէ տաճկըցող տուները»⁸³. «Իրողութիւն է, որ կամաւոր կամ բռնի մահ մը տասն անգամ աւելի նուազ վիշտ կը պատճառէ մնացողներուն, քան տաճկընալը»⁸⁴:

Այսպիսով՝ Օշականի վեպում արյունը և սեռը թուրք էթնիկական տեսակի հոգեվերլուծության բևեռներն են, ներքին խտության լարումները: Թրքությունը՝ որպէս հավաքական հոգեբանություն, Օշականի թուրք հերոսների արյան, այսինքն՝ բնածին էության մակարդակի մեջ է: **Այլ կերպ ասած՝ թրքությունը կենսաբանական հոգեբանություն է, բնազդային մտահամակարգ:**

Նարինե Ա. Հովհաննիսյան – հեղինակ է երկու մենագրության և երեսունից ավելի գիտական հոդվածի: Հետաքրքրությունների շրջանակը՝ 20-րդ դարի հայ գրականություն, Հայկական հարցը հայ գրականության մեջ:

80 **Օշական Յ.**, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. Ժ, էջ 147:

81 **Օշական Յ.**, Մնացորդաց, հատ. Գ, էջ 412:

82 Նույն տեղում, էջ 116:

83 Նույն տեղում, էջ 449:

84 Նույն տեղում:

Summary

THE IMAGE OF A TURK IN HAKOB OSHAKAN'S NOVELS

Narine A. Hovhannisyan (Stepanakert)

Key words – Armenian question, genocide, ideography, Turk, tribal character, biological psychology, sadism, sense, denial, psychological moment, mindset, custom, flow of consciousness.

Hakob Oshakan's novel, besides being culturology, chronology, psychoanalysis and ideology, is, in our deep conviction, the novel of the Armenian Question. The historical process that started the tragedies of the Armenian people to counter the Armenian Question was largely conditioned by the presence of the Turks. Consequently, Turkishness and the Turk, as a collective whole of national characteristics, became the main concentration of thoughts of Oshakan's novel.

Exceptional depths are the psycho-observations and psycho-instinctive discoveries of the Turk's character created by Oshakan, the penetration of racial inner, dark folds, the uncoverings and decipherments of the instincts of the sexual psychological impulses, the subconscious flow, the discoveries of internally stored realities.

In Oshakan's novel, the most typical manifestations of sexual psychology of the Turk's character are vulgarity, rape, ethnic profanation, homosexuality, forced feminization, at that they are not private cases of racial psychology, but a public phenomenon and morality. Turkish sexual harassment and racial sadism were fully exposed during the Armenian massacres. According to Oshakan, the Armenian massacres, especially the 1915 Genocide, were the historical platform for Turkish self-manifestation.

One of the striking features of Turkish ethnic psychology described in Oshakan's novel is religious fanaticism with a focus on anti-Armenian sentiment. Hatred on an unbelievable level is a sacred feeling in Turkish national psychology, also a public phenomenon, a state-encouraged policy. The false ideology of the Turkish state-nation has for centuries instilled in Turkey the mentality that Armenians live on their lands, sowing hatred towards Armenians to the point of national fanaticism.

According to Oshakan, the psychology of extermination and expansionism reaches the level of doctrine in Turkey. The ideology of the Great Turan is the cornerstone of the Turkish national-political strategy and Oshakan shows that Pan-

Turkism and Turanism, as complementary concepts, are the national basis for the education of Turkish generations. The dream of the Great Turan, complemented by the racial biological instincts of the Turks, became the precondition for the Armenian Genocide and the occupation of the Armenian Highland.

Oshakan's revelations of Turkish ethnic psychology are falsification, denial, cunning and unsurpassed diplomacy. On the symmetry of the subconscious and conscious levels of Turkishness Oshakan directs sharp emphases especially against the conscious: crime and villainy are born from the inner drive of the Turkish biological instincts, from the unconscious level of meditations, from the sound of blood, while denial and treachery are manifestations of the conscious level.

Oshakan's revelations of the Turkish ethnic image lead to the philosophical notion of an anti-human. The philosophy of the anti-man rises on the internal psychological basis of the history of sadistically committing genocides towards unarmed nations and cold-heartedly denying them. Conscience and self-esteem as psychological elements are completely absent in the Turkish national consciousness and psychological structure.

Thus, in Oshakan's novel, blood and gender are the poles of the ethnic Turkish type of psychoanalysis, the tensions of internal density. Turkey, as a collective psychology, is at the level of the blood of the Turkish heroes of Oshakan, that is, of innate essence. In other words, Turkishness is a biological psychology, an instinctive mental system.

Резюме

ОБРАЗ ТУРКА В РОМАНАХ АКОПА ОШАКАНА

Нарине А. Ованнисян (Степанакерт)

Ключевые слова – Армянский вопрос, геноцид, идеография, турок, родовой образ, биологическая психология, садизм, орган чувств, отрицание, психологический момент, умонастроение, нрав, поток сознания.

Роман Акопа Ошакана, наряду с тем, что является культурологией, описанием нравов, психоанализом и идеографией, по нашему глубокому убеждению, есть роман Армянского вопроса. Исторический процесс, положивший начало трагедиям армянского народа с целью противодействовать Армянскому вопросу, во многом был обусловлен наличием турецкости. Поэтому турецкость и турок

как собирательная целостность национальных признаков стали главнейшими фокусами мыслей в романе Ошакана. Исключительной глубиной обладают наблюдения за душевными явлениями и душевно-инстинктивные раскрытия образа турка, созданного Ошаканом, проникновения во внутренние, темные родовые складки, раскапывание и расшифровка душевных устремлений сексуальных инстинктов, подсознательных потоков, обнаружение скрытых внутренних явлений.

Самыми характерными проявлениями сексуальной психологии образа турка в романе Ошакана являются похотливость, изнасилование, фиксация на инцесте, мужеложство, принудительная феминизация, причем это не частные случаи родовой психологии, а общественные явления и нравы. Сексуальные пристрастия, родовой садизм турка полноценно проявились во время резни армян. Резня армян, особенно геноцид 1915 г., по убеждению Ошакана, была исторической платформой самопроявления турецкости.

Из ярких признаков родовой психологии турка в романе Ошакана изображен также религиозный фанатизм с концентрацией на армянофобии. Ненависть к неверным – святое чувство в турецкой национальной психологии, а также общественное явление, политика, поощряемая на государственном уровне. Турецкая государственно-национальная ложная идеология веками закрепляла в турецкости умонастроение, что армяне живут на их землях, таким образом зарождая ненависть к армянам, достигающую уровня национального фанатизма.

Психология истребления и агрессивности, по Ошакану, доходит в турецкости до степени доктрины. Идеология Великого Турана – основополагающая точка турецкой национально-политической стратегии, и Ошакан показывает, что пантюркизм и туранизм как взаимодополняющие концепции составляют также национальную основу воспитания поколений турок. Мечта о Великом Туране, взаимодополняясь с родовыми биологическими инстинктами турка, стала пред-условием Геноцида армян и захвата Армянского нагорья.

В число ошакановских раскрытий родовой психологии турка входят также ложь, отрицание, коварство и непревзойденная дипломатия. На основе соразмерности подсознательного и сознательного уровней турецкости Ошакан делает острые акцентировки, направленные особенно против сознательного: преступление и злодеяние рождаются из внутреннего порыва биологических инстинктов турка, его сосредоточений подсознательного уровня, между тем как отрицание и коварство - проявления сознательного уровня.

Ошакановские раскрытия родового образа турка приводят к философскому понятию античеловека. Философия античеловека воздвигается на внутренней психологической основе истории садистского геноцида невооруженных народов и хладнокровного отрицания. Совесть и самоуважение как элементы души пол-

ностью отсутствуют в национальном сознании и психологическом строении турка.

Таким образом, в романе Ошакана кровь и пол являются полюсами психоанализа этнического вида турка, напряжениями внутренней плотности. Турецкость как собирательная психология находится в турецких персонажах Ошакана на уровне крови, то есть прирожденной сущности. Говоря иначе, турецкость является биологической психологией, инстинктивной системой мышления.

REFERENCES

1. **Ōshakan Y.**, Намататкер аревмтаhay grakanut'ean, hat. Zh, Ant'iliias, tparan Kilikioj Kat'oghikosut'ean, 1982 **(In Armenian)**.
2. **Ōshakan Y.**, Hariwr mēk taruan, Ant'iliias, Kat'oghikosut'ean Hayots' Metsi tann Kilikioj tparan, 1996 **(In Armenian)**.
3. **Ōshakan Y.**, Mayrineru shuk'in tak (Grakan zroyts' Y. Ōshakani het), gri araw` B. T'ashean, Pēyrut', tparan Alt'ap'res, 1983 **(In Armenian)**.
4. **Ōshakan Y.**, Mnats'ordats', hat. A, hat. B, hat. G, Ant'iliias, tp. Kilikioj Kat'oghikosut'ean, 1988, **(In Armenian)**.
5. **Pēltean G.**, Ōshakani vēpē, "Azdak", Pēyrut', 1973, ḡgostos 11 **(In Armenian)**.
6. **Tasnapetean Sh.**, Yakob Ōshakani vēpē, Pēyrut', Hamazgayini Vahē Sēt'ean tparan, 1994 **(In Armenian)**.